

## ՄԻ ԴՐՎԱԳ ՀԱԿՈԲ ԶԱՎՐԻԵՎԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ (1915 թ. նոյեմբեր - 1916 թ. մարտ)

### ԷԴԻԿ ԶՈՂՐԱԲՅԱՆ

Առաջին աշխարհամարտի տարիներին հայոց դիվանագիտական գործունեության մեջ իր ուրույն ու բացառիկ տեղն ու դերն ունի Յակոբ Զավրիկը (Զավրյանը՝ ազնվականի ընտանիքում ծնված (1866 թ.) և թժկական փայլուն կրթություն ստացած այդ երևելի քաղաքական գործիչը, որն ամբողջ կյանքը նվիրաբերեց հայ ժողովրդի արևմտահայ հատվածի առջև ծառացած չափազանց բարդ և անլուծելի թվացող իհմնախնդիրների լուծման գործին: 1912 թ. առաջին անգամ առնչվելով դիվանագիտական աշխատանքին՝<sup>1</sup> նա այնուհետև մինչև կյանքի վերջը իր ուսերի վրա կրեց դիվանագիտական գործունեության բարդ ու պատասխանատու աշխատանքի բեռը և արդեն 1913 թ. գործուղվեց Պետերբուրգ՝ Յայկական հարցի շուրջ ռուսական կառավարության հետ բանակցելու և վերջինիս հայոց օգտին տրամադրելու նպատակով: Թե ինչպես կատարեց իր այդ առաքելությունը, ում հետ բանակցեց և ինչ արդյունքի հասավ, այդ մասին մեր պատմագրության մեջ ոչինչ չեք գտնի. այդ ամենը մնում է որպես հայ դիվանագիտության պատմության սպիտակ էջերից մեկը: Պատճառը հավանաբար այն է, որ բանակցությունները (եթե վարվել են) ընթացել են բանավոր գրույցների ձևով Ռուսաստանի արտգործմինիստրության առանձին պաշտոնյաների հետ: Նույն կերպ են ընթացել բանակցությունները 1915 թ. մարտին՝ 6 վիլայեթներից և Կիլիկիայից կազմված ինքնավար Յայաստանի ստեղծման մասին: Բայց քանի որ Կիլիկիայի հարցը առնչվում էր Ֆրանսիայի հետաքրքրությունների հետ, ինչի մասին տեղեկացված էր ռուսական կառավարությունը, ուստի Ռուսաստանի արտգործմինիստրության խորհրդով Զավրիկը 1915 թ. ապրիլին մեկնեց Եվրոպա՝ տրամադրելու ֆրանսիական և անգլիական կառավարություններին Կիլիկիան հայկական հետաքրքրությունների շրջանակի մեջ մտցնելու օգտին: Տեղի ունեցան դիվանագիտական գաղտնի գրագրություններ Ռուսաստանի արտգործմինիստր Սազոնովի և Փարիզի ու Լոնդոնի ռուս դեսպանների միջև: Յենց այդ դիվանագիտական գրագրություններից էլ տեղեկանում ենք, որ Զավրիկի (նրան միացել էր նաև Պողոս Նուրբար փաշան) թափած ջանքերն ապարդյուն են անցել, քանզի նրան չի հաջողվել Փարիզին և Լոնդոնին տրամադրել Կիլիկիան ինքնավար Յայաստանի կազմում տեսնելու հարցում<sup>2</sup>:

<sup>1</sup> Պոլսում Ակնունու ու Փափազյանի հետ միասին Զավրիկը կազմել է արևմտահայության թվակազմի մասին տեղեկագիր և ուղարկել Բեռլինի հայկական կոմիտե՝ գերմանիայի կառավարությանը հանձնելու նպատակով (տես «Յառաջ», 18 ապրիլի 1920 թ., № 79):

<sup>2</sup> Մանրամասն տես՝ L. Յովհաննիսյան, Յայկական հարցը և մեծ տերությունները 1914-1917 թվականներին, Երևան, 2002, էջ 87-91:

Անհաջողության մատնվելով Փարիզում և Լոնդոնում՝ Հակոբ Զավրիկը, այնուամենայնիվ, չի հուսահատվում և շուտով սկսում է նպատակին հասնելու այլ ճանապարհներ որոնել: Հասկացե՞լ էր արդյոք նա, որ Թուրքիայի ռազմական ջախջախման դեպքում տեղի կունենա նրա տարածքների բաժանում հաղթողների միջև, և հետևապես Հայկական հարցը իրենց ակնկալած տարբերակով լուծում չի ստանա, դժվար է որոշակիորեն ասել: Բայցևայնպես, դատելով Զավրիկի հետագա գործունեությունից, Թուրքիայի հարցում նրա հետագա ծրագրից, ծրագիր, որի իրագործումը կհանգեցներ Ասիական Թուրքիայի անբողջության պահպանմանը և նրա գերիշխանության տակ վեց վիլայեթներից և Կիլիկիայից կազմված ինքնավար Հայաստանի ստեղծմանը, պետք է ենթադրել, որ Ֆրանսիայի և Անգլիայի մայրաքաղաքներում վարած բանակցություններից նա որոշակի հետևությունների հանգել էր: Այդ են վկայում թեկուզ Ձեմալ փաշայի օգնությամբ Թուրքիայում հեղաշրջում կատարելու նպատակով նրա մշակած ծրագիրը և ձեռնարկած քայլերը: Զավրիկին հաջողվում է առաջ բերել ուսական դիվանագիտության հետաքրքրությունը, և 1915 թ. նոյեմբերից մինչև 1916 թ. մարտը հայերի աջակցությամբ Ձեմալ փաշային Կոստանդնուպոլսի դեմ ապստամբության դրդելու հարցը արտգործմինիստրությունների մակարդակով ակտիվ քննարկման նյութ է դառնում Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի միջև: Դենց այդ հարցի վերհանմանը և լուսաբանությանն է նվիրված սույն հոդվածը, հարց, որը, ըստ էության, միայն մասնակիորեն է շոշափվել մեր պատմագրության մեջ<sup>3</sup>:

Նոյեմբերի 28-ին (դեկտեմբերի 11-ին) Բուխարեստում Ռուսաստանի դեսպանորդ Ս. Ա. Պոկլսկին արտաքին գործերի մինիստրության երկրորդ քաղաքական բաժնի խորհրդական Կ. Ն. Գուլկիչին հեռագրում է. «Անձամբ: Խնդրում եմ վերծանել անձամբ:

Զավրիկին լուրեր են հասել Ձեմալ փաշայի և քուրքական կառավարության միջև ծագած տարածայնությունների մասին, որոնք որոշ հույս են ներշնչում, որ գուցե հենարավոր լինի դրդել Ձեմալին բացահայտ ելութի Կոստանդնուպոլսի դեմ, եթե համաձայնական տերությունների կողմից նրան խոստում տրվեր տիրելու Ասիական Թուրքիայում: Զավրիկը հարցնում է, թե վերոշարադրյալը որքանո՞վ է համապատասխանում կայսերական կառավարության նպատակներին, քանի որ այդժամ հայերը Ձեմալի վրա ազդելու որոշ միջոցներ ունեն»<sup>4</sup> (ընդգույնը մերն է - Ե. Զ.):

Չի կարող ուշադրություն չգրավել այն հանգամանքը, որ Զավրիկը, դեռևս ոչ մի կապ չունենալով Ձեմալի հետ ու չիմանալով վերջինիս կարծիքը, նրա անունից խոստումներ է տալիս և պայմաններ առաջ քաշում: Ինչի՞ց ելնելով էր Զավրիկը կարծում, որ Ասիական Թուրքիայում տիրելու տերությունների խոստումը բավարար է Ձեմալին Կոստանդնուպոլսի դեմ

<sup>3</sup> Օրինակ՝ Լ. Յովիաննիսյանը, շուրջ 5 էջ նվիրելով Զավրիկի գործունեությանը Փարիզում և Լոնդոնում, «Ձեմալի ծրագրին» հատկացրել է միայն մեկ էջ (տես Լ. Յովիաննիսյան, նշվ. աշխ., էջ 91-92):

<sup>4</sup> "Раздел Азиатской Турции" (по секретным документам министерства иностранных дел). М., 1924, с. 141-142.

Ելույթի հրահրելու համար, չենք կարող ասել փաստերի բացակայության պատճառով։ Բայց որ Թուրքիայում ամեն մի ցնցում Ուսւաստանի համար շահավետ էր՝ անկախ արդյունքներից, դա էլ անկասկած էր, և արդեն հաջորդ օրը Գուլկահչը հեռագրում է Պոկլսակուն. «Ամեն մի երկապառակտություն Թուրքիայում և, մասնավորապես, կառավարական միջավայրում, մեզ միմիայն ձեռնտու կարող է լինել։ Զեմալին կարող են ամենալայն խոստումներ տրվել, դրանց մասին դաշնակից տերությունների համաձայնությունը կստացվի, երբ դրա անհրաժեշտությունը լինի։ Մինչ այդ անհրաժեշտ է գործը հնարավորինս գաղտնի պահել»<sup>5</sup> (ընդգծումը մերն է - Է. Զ.)։

Պատասխանելով Գուլկահչին՝ Պոկլսակին դեկտեմբերի 12-ի (25-ի) հեռագրում ներկայացնում է Զավդիկի կարծիքը Զեմալի հետ բանակցությունների մասին. «Զավդիկը կարծում է, որ Զեմալի վերաբերյալ ծրագիրը հաջորդության ավելի մեծ շանս կունենա, եթե այն իրականացվի արտաքին գործերի միջնատրության ագենտների միջոցով, ըստ որում՝ հայերը օժանդակություն ցույց կտան միմիայն այնտեղ, որտեղ հարկավոր է»<sup>6</sup>։

Դժվար չէ նկատել, որ հեռագրի այս առաջին տողերից զգուշավորության հոտ է փչում, կարծես թե Զավդիկը հասկացել է ձեռնարկած քայլի վտանգավորությունը և փորձում է հայերին չներքաշել ակտիվ գործողությունների մեջ։ Սակայն այդ տպավորությունը վերանում է, երբ ծանոթանում ենք հաջորդ տողերին։ «Սակայն, - ասված է շարունակության մեջ, - եթե պահանջվում է, ապա հայերը պատրաստ են իրենց վրա վերցնելու բանակցությունների սկիզբը և անհապաղ երկու վստահված անձ ուղարկել Եգիպտոս՝ վերականգնելու կապերը Զեմալի հետ, որ նրանք ունեցել են»<sup>7</sup>։ Զավդիկը նույնիսկ մշակել և Պոկլսակուն է ներկայացրել գործողության ծրագիր, ըստ որի՝ Եգիպտոս մեկնելու համար անհրաժեշտ է համարում, որ Ուսւաստանի արտգործմինիստրությունը.

«1. Երկու անձանց ապահովի անհրաժեշտ անցաթղթերով և երաշխիքներով։

2. Կարգադրի Ունգենի և շվեդական սահմանի սահմանապահներին այդ երկու անձանց երկու սահմաններով անարգել անցման մասին։

3. Ցուցում տա Ֆրանսիայում և Անգլիայում իրենց դիվանագիտական ներկայացուցիչներին՝ նշված անձանց աջակցելու այդ երկու երկրներով անարգել անցմելու և ապահովելու նրանց ծովով արագ մեկնումը Եգիպտոս։

4. Զգուշացնի Եգիպտոսի տեղական իշխանություններին, որ նրանք չխանգարեն նշված անձանց աշխատանքը այն ուղղությամբ, որ նրանք անհրաժեշտ կհամարեն։

5. Քանձնարարի Եգիպտոսում մեր դիվանագիտական ներկայացուցիչն այդ երկու անձանց ցուցաբերելու անհրաժեշտ հովանավորություն, պաշտպանություն և ըստ կարելվույն աջակցություն։

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 142։

<sup>6</sup> Նույն տեղում։

<sup>7</sup> Նույն տեղում։

6. Թույլատրի երկու անձանց կապերի մեջ լինել Զավրիկի հետ հեռագրով՝ Եգիպտոսի կամ այլ երկրների մեր դիվանագիտական ներկայացուցիչների միջոցով»<sup>8</sup>:

Ըստ Զավրիկի՝ գործուղված անձանց խնդիրն է լինելու Զեմալի հետ կապեր հաստատելու ուղիներ որոնել, փորձել շահագրգռել Զեմալին, առաջ բերել նրա հետաքրքրությունը առաջարկության նկատմամբ և հրավիրել բանակցությունների: Ըստ որում՝ հաջողության դեպքում հայերը հեռանում են գործից, իսկ բանակցությունների անմիջական վարումը արտաքին գործերի միջնատրությունը պետք է դնի հատուկ մարդկանց վրա: Զավրիկը նաև հնարավոր անհաջող ելքի մասին է մտածում՝ ասելով, որ գործուղվող անձինք չեն երաշխավորում, որ իրենց փորձը անպայման հաջողությանը կավարտվի հատկապես Զեմալի տրամադրության հնարավոր փոփոխության առումով՝ այն հսկայական տպավորության ազդեցության պատճառով, որ առաջ են բերել Թուրքիայում գերմանա-բուլղարական բանակների հաջողությունները և անգլ-ֆրանսիացիների կողմից Յալիպոլի թերակզու մի մասի օկուպացիան: Յեռագրից նաև պարզվում է, որ արդեն որոշված էին այն երկու անձինք, որոնք պետք է գործուղվեին Եգիպտոս, քանի որ նրանում ասված է, որ գործուղվող անձանցից մեկը ուղարկատակ է, իսկ մյուսը՝ անգլոհպատակ:

Պարզել, թե ովքեր էին գործուղվող անձինք, իհարկե, որևէ կերպ հնարավոր չեն, քանի որ այն խիստ գաղտնի էր պահպում, և ոչ մի փաստաթղթում այդ մարդկանց անունները չեն հիշատակվում: Ասենք դա կարևոր էլ չէ. գլխավորն այն է, որ Զավրիկը, դեռ ռուսական կառավարության համաձայնությունը չստացած, արդեն ընտրել էր Եգիպտոս մեկնելու և Զեմալի հետ նախնական բանակցություններ սկսելու թեկնածուներին:

Ուշագրավ մի փաստ ևս. պարզվում է, որ «Պոկլոսկու՝ Գուլկուչին հեռագրելու արդեն հաջորդ օրը (դեկտ. 12 (25)-ին) Ուստաստանի արտգործ-միջնատր Սազոնովը Փարիզի, Լոնդոնի և Յոնի իր դեսպաններ իզվուկուն, Բենկենդորֆին և Գիրսին ուղարկել էր հեռագրեր, որոնցում ասված էր, որ «Կոստանդնուպոլսի հայկական շրջաններից հայտնում են, որ իբր հույս կա Զեմալին դրդելու բացահայտ ապստամբության Կոստանդնուպոլսի կառավարության և գերմանացիների դեմ, եթե տերությունները առաջարկեն նրան հետևյալ պայմանները»:

1. Տերությունները երաշխավորում են Սահական Թուրքիայի անկախությունը և անձեռնմխելիությունը, որը պետք է կազմված լինի սուլթանի գերիշխանության տակ գտնվող հետևյալ ինքնավար պրովինցիաներից՝ Սիրիա, Պաղեստին, Միջագետք, Արարիա, Յայաստան՝ Կիլիկիայի հետ միասին, Քուրդիստան:

2. Զեմալ փաշան հոչակվում է սուլթան՝ հորից ավագ որդուն անցնող տոհմական ժառանգականության սկզբունքով:

3. Զեմալը պարտավորվում է Կոստանդնուպոլսի կառավարությունը և սուլթանին հայտարարել գերմանացիների մոտ գերության մեջ գտնվողներ, ինչպես նաև արշավանքի ելնել նրանց դեմ:

<sup>8</sup> Նույն տեղում:

4. Կոստանդնուպոլսի դեմ նրա արշավանքի ժամանակ տերություն-ները նրան կմատակարարեն գենք, զինամբերը և հրետանի:

5. Պատերազմի ավարտից հետո տերությունները Ձենալին ֆինանսական օգնություն ցույց կտան:

6. Ձենալը հաշտվում է նեղուցների և Կոստանդնուպոլսի կորստի հետ:

7. Ձենալը պարտավորվում է այժմ ևեր միջոցներ ձեռք առնել հայերին փրկելու և նրանց կերակրելու ուղղությամբ մինչև պատերազմի ավարտը»<sup>9</sup>:

Յազիկ թե հարկ կա ապացուցելու, որ այս կետերում անփոփած են բացառապես Ռուսաստանի շահերը և անտեսված Անգլիայի և Ֆրանսիայի շահերը: Ենիշ է, այդ նույն դեկտեմբերին սկսվել էն Թուրքիայի բաժանման վերաբերյալ անգլիացի Սայքսի և Ֆրանսիացի Պիկոյի միջև բանակցությունները, որոնք խստ գաղտնի էն պահպում, բայց չէ՝ որ ռուսական դիվանագիտությունը քաջատեյակ էր Սիրիայի և Կիլիկիայի նկատմանը Ֆրանսիայի, իսկ Միջօգենտքի ու Պաղեստինի նկատմանը՝ Մեծ Բրիտանիայի հավակնություններին: Ուրեմն Ասիական Թուրքիայի ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը պահպանելու մասին խոսք լինել չէր կարող, քանի որ այն հակասում էր Անգլիայի և Ֆրանսիայի շահերին, իսկ սուլթանի գերիշխանությունից Կոստանդնուպոլիսն ու նեղուցները դուրս բերելու հարցում շահագրգռված էր բացառապես Ռուսաստանը: Այլ կերպ ասած՝ այս ծրագիրը սկզբից ևեր դատապարտված էր ձախողման: Ուրեմն ինչի՝ վրա էր հույսը դրել Ռուսաստանը. «Ներքին ամեն կարգի բարդությունները կարող են միայն թուլացնել Թուրքիայի ուժերը և ծառայել մեր օգտին, - ասված է հեռագրի շարունակության մեջ: - Դրա համար էլ, կարծում եմ, որ արժե մեզ նվիրված հայերի միջոցով գաղտնի բանակցությունների մեջ մտնել Ձենալի հետ: Եթե վերջինիս անգամ չհաջողվի քշել գերմանացիներին և տապալել Կոստանդնուպոլիսի կառավարությունը, այնուամենայնիվ օգտակար կլինի խռովություն առաջացնել Օսմանյան կայսրությունում»<sup>10</sup>: Վերջում Սազոնովը հրահանգում է իր դեսպաններին այս առիկ բացատրություն տալ հավատարմագրված կառավարությունների արտգործմինհատրներին և շտապ հեռագրել իրեն:

Ինչ խոսք, որ Թուրքիայում ամեն կարգի ներքին խլրտում կծառայեր Անտանտի շահերին, և այս առումով Անգլիան ու Ֆրանսիան դեմ չէին լինի Ձենալի ապստամբությանը, եթե միայն դրա փոխարեն չպահանջվեր Ասիական Թուրքիայի ամբողջականության պահպանումը: Իսկ ո՞վ պետք է Ձենալի հետ բանակցությունների մեջ մտներ և դրդեր նրան ապստամբության: Դատելով Սազոնովի դեկտեմբերի 12-ի հեռագրից՝ նա ուզում էր, որ Ձենալի հետ «գաղտի բանակցությունները» վարվեին «իրենց նվիրված հայերի միջոցով»: Դա Ռուսաստանի համար հարմար տարբերակ էր, քանի որ ձախողման կամ իրադարձություններն այլ ընթացք ստանալու դեպքում կարելի կլիներ այն բարդել հայերի վրա, ներկայացնել որպես նրանց ինքնագործունեության արդյունք: Բայց ի՞նչ կշահեին հայերը, եթե ոչ այն, որ

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 142-143:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 143:

Երիտրուրք հայատյացների ձեռքը մի նոր խաղաքարտ կտային հայտարարելու, որ հայերը Օսմանյան կայսրության թշնամիներն են, և որ ոչ միայն իրենք են ապստամբում, այլև թուրքերին են ապստամբության դրդում: Հասկանո՞ւմ էին արդյոք Զավրիկը և նրա գործընկերները իրենց ձեռնարկած քայլի վտանգավորությունը, թե՝ չէ: Գործո՞ւմ էին արդյոք նրանք ինքնուրույնաբար, թե՝ այս հարցում ստացել էին ՀՅԴ ղեկավարության և Ազգային բյուրոյի համաձայնությունը: Այդ նասին տվյալներ չկան:

Սակայն շուտով պարզվեց, որ Զավրիկը շտապել է, իսկ Սազոնովն էլ՝ սխալվել դաշնակիցներին ներկայացրած ծրագրի հարցում: Միայն Խոալիան անվերապահորեն կողմ արտահայտվեց Սազոնովի՝ դեկտեմբերի 12-ին Լոնդոն, Փարիզ և Յոռմ ուղարկած հեռագրերում ներկայացված ծրագրին: Դեկտեմբերի 13-ին պատասխանելով Սազոնովին՝ Յոռմում ռուսական դեսպան Գիրսը գրում է. «Սոնինոն<sup>11</sup> ասաց ինձ, որ ինքը ամբողջովին հավանություն է տալիս Ձեմալի հետ ձեր թվարկած պայմանների հիման վրա բանակցությունների մեջ մտնելու մտքին, եթե հաջողության որևէ հույս կա: Վերջինով մենք կիանգստացնեինք անգլիացիներին, որոնք վախենում են Եգիպտոսի համար, և գերմանացիներից կիվեինք Փոքր Ասիայում պահեստի այն մարդկանց, որոնց վրա, ըստ երևոյթին, նրանք հույս են դնում»<sup>12</sup>:

Ինչպես տեսնում ենք, Սոնինոն բոլորովին պատկերացում չուներ Պաղեստինի, Միջագետքի, Սիրիայի և Կիլիկիայի նկատմամբ Անգլիայի և Ֆրանսիայի հավակնությունների մասին, իսկ Խոալիան էլ այդ շրջանում թուրքիայի ասիական տարածքների նկատմամբ դեռևս որևէ հավակնություն չուներ: Յետևապես Սազոնովի ներկայացրած ծրագրի վերաբերյալ որևէ առարկություն ունենալ չէր կարող: Բոլորովին այլ էր Անգլիայի և Ֆրանսիայի դիրքը:

Դեկտեմբերի 14-ին Իզվոլսկին հեռագրում է Սազոնովին, թե նրա հեռագրի բովանդակությունը հայտնել է Բրիտանին<sup>13</sup>, որ վերջինս մեծ հետաքրքրություն է ցուցաբերել Ձեմալի հետ բանակցելու մտքին և ասել, որ չի հապաղի վաղը ևեր այդ հարցը քննել մինհստրների խորհրդում: Այնուհետև ավելացնում է, որ առայժմ միայն նկատել է, թե նրա նշած պայմանները կարող են զգալիորեն շոշափել Անգլիայի շահերը: Իսկ երկու օր հետո հեռագրում է. «Բրիտանը, որի հետ ես հանդիպեցի այսօր մինհստրների խորհրդի նիստից հետո, ինձ ասաց, որ ինքը միանգամայն հասկանում է Ձեմալի հետ բանակցությունների Ձեր պլանի ամբողջ կարևորությունը, բայց այն տեսքով, ինչ Դուք ներկայացրել եք, այդ պլանը ֆրանսիական կառավարության կողմից լուրջ առարկություններ է առաջացնում, քանի որ Ձեր նշած պայմանների իրականացումը ենթադրում է, որ Ռուսաստանը կպահպանի իր համար կոստանդնուպոլիսը և նեղուցները, մինչդեռ Ֆրանսիան պետք է հրաժարվի այն հողերից, որ ապահովում էր նրա համար մեզ հետ կնքած համաձայնագիրը<sup>14</sup>, այ-

<sup>11</sup> Սոնինոն Խոալիայի արտաքին գործերի մինհստրն էր:

<sup>12</sup> "Раздел Азиатской Турции", с. 144.

<sup>13</sup> Ֆրանսիական կառավարության պեմիեր-մինհստր և արտաքին գործերի մինհստր (1915 թ. հոկտ. – 1917 թ. մարտ):

<sup>14</sup> Նկատի ունի 1915 թ. ապրիլի 26-ին Լոնդոնում Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև ստորագրված համաձայնագիրը:

**սինքը՝ Սիրիայից, Պաղեստինի մի մասից և Կիլիկիայից:** Ֆրանսիայի հասարակական կարծիքը չի հասկանա նման իրաժարումը, ճիշտ այնպես, ինչպես ռուսական հասարակական կարծիքը չէր հասկանա Ռուսաստանի իրաժարումը Կոստանդնուպոլսից և նեղուցներից: Բացի դրանից՝ չպետք է մոռանալ, որ Անգլիան մտադիր է ստեղծել անկախ արաբական խալիֆաթ և արդեն այդ ուղղությամբ բանակցություններ է վարում Մեքքայի շերիֆի հետ»<sup>15</sup> (ընդգծումը մերն է - է. Զ.):

Անշուշտ, ճիշտ է Բրիտանը, որ Սազոնովի ներկայացրած ծրագրում անտեսված են Ֆրանսիայի (և նաև Անգլիայի) շահերը, բայց ճիշտ չէ Բրիտանը, եթե վկայակոչում է Ֆրանսիայի հասարակական կարծիքը՝ որպես Զեմալի հետ բանակցությունների սկսման արգելք, այն պարզ պատճառով, որ այդ համաձայնագրերը խիստ գաղտնի էին պահպում և հրապարակվեցին Ռուսաստանում բոլշևիկների հշխանության գլուխ անցնելուց հետո միայն (1917 թ. վերջին): Սակայն Իգվոլսկին չի վիճարկում Բրիտանի այդ տեսակետը, թեև հրաշալիորեն հասկանում է, որ հասարակական կարծիքը վկայակոչելը հարցից խուսափելու պարզ դիվանագիտական խաղ է: Եվ շարունակելով ներկայացնել Բրիտանի հետ իր գրույցը՝ հայտնում է, որ գրույցի վերջում Բրիտանը կասկած հայտնեց, թե արդյոք Զեմալը ի վիճակի է իրականացնելու այդ ծրագրու՝ նկատի առնելով նրա գործերի սահմանափակ թիվը, որին ինքը պատասխանել է, թե համոզված է, որ հանդես գալով նման առաջարկությամբ՝ ռուսական կողմը նախ և առաջ նկատի է ունեցել այն հսկայական օգուտը, որ առաջ կրերի խորվությունը Օսմանյան կայսրությունում: Իսկ ինչ վերաբերում է Ֆրանսիայի (նաև Անգլիայի) շահերին, ապա դրանք կարելի է ապահովել ծրագրի հետագա նշակնան ժամանակ ամենատարբեր կոմբինացիաների միջոցով: «Գլխավորը, ընդհանրացրի ես, բաց չթողնել ընձեռված հնարավորությունը առաջացնելու բարդություններ, որոնք իսկույն կարգելակեն Գերմանիայի արևելյան պլանների իրականացմանը: Բրիտանը այս վերջին մտքի հետ համաձայնեց, - ասված է հեռագրի վերջում, - և ասաց ինձ, որ ինքը պատրաստ է ձեռնամուխ լինելու Զեմալի հետ Զեր առաջարկած բանակցություններին, միայն թե դրա հետ մեկտեղ միանգամայն որոշակի վերապահություն արվի Ասիական Թուրքիայի մի մասի վրա Ֆրանսիայի իրավունքի մասին, որոնց նրա կողմից տիրելը ապահովված է մեզ հետ կնքած համաձայնագրով»<sup>16</sup>:

Նույն օրը Իգվոլսկին մի հեռագիր էլ է ուղարկում Սազոնովին, որում բառացիորեն ասված է.

«Ին № 854 հեռագրի շարունակությունը:

Անձնական – Զեմ (կարող) Զեզմից թաքցնել, որ Բրիտանի պատասխանում զգալի էր եթե ոչ գրգռվածություն, ապա գոնե որոշ անբավարարվածություն: Զեզ հայտնի է, որ Կոստանդնուպոլսի նեղուցների մասին համաձայնագրիրը այստեղի պառլամենտական շրջաններում առանձնապես պոպուլյար չէ, և այն Դելկասեյի նկատմամբ կշտամբանքի առիթ դարձավ, և որոշ անդամներ (կառավարության) նրան բացահայտորեն չեն համակրում: Ըստ էության, այդ համաձայնագրիրը, իհարկե, ոչ մեկը չի վիճարկում,

<sup>15</sup> "Раздел Азиатской Турции", с. 145.

<sup>16</sup> Նույն տեղում:

և (մենք) կարող ենք միանգանայն վստահ լինել, որ Ֆրանսիան այն բարեխղճորեն կկատարարի, բայց մեր կողմից մենք պետք է խուսափենք այն ամենից, ինչը կարող է կասկածանքների առիթ դառնալ մեր պատրաստականության հանդեպ՝ տրամադրելու Ֆրանսիային իր խնդրանքով վերապահված փոխհատուցումները։ Այստեղ չեն կարող չհասկանալ Օսմանյան կայսրությունուն խռովություն առաջ բերելու անբողջ կարևորությունը, բայց եթե մենք ուզում ենք ստանալ ֆրանսիական կառավարության համաձայնությունը Զենալի հետ բանակցությունների համար, անհրաժեշտ է գտնել ինչ-որ բանաձև կամ կոմքինացիա, որը կապահովեր Ֆրանսիայի համար այնպիսի իրավունքներ, որոնք ճանաչվեն նրա համար Կոստանդնուպոլսի մասին համաձայնագրով»<sup>17</sup>։

Դժվար չէ նկատել, որ Իզվոլսկին դժգոհ է Սազոնովի ներկայացրած ծրագրից. փաստորեն նույնիսկ նրբորեն կշտամբում է նրան այդ անհաջող քայլի համար։ Իսկապես որ, պայմանների հարցում Սազոնովը դրսկորել էր զարմանալի աննրամկատություն իր դաշնակիցների շահերի հանդեպ՝ մոռացության տալով նույն թվականի գարնանը ձեռք բերված համաձայնությունները։ Եվ Իզվոլսկու այս հեռագրից ուշացումով հասկանալով իր սխալը՝ Սազոնովը, այնուամենայնիվ, փորձում է արդարացնել իրեն՝ կատարվածի համար մեղքը բարդելով հայերի վրա։ «Զենալի հետ բանակցությունները դիտելով որպես միջոց Թուրքիայում խռովություն առաջ բերելու և Եգիպտոսի վրա արշավանքը ձախողելու գործում, - գրում է նա Իզվոլսկուն հասցեագրած պատասխան հեռագրում, - ես անհրաժեշտ համարեցի դաշնակիցների քննարկմանը ներկայացնել հայկական պլանը բառացի՝ չմտնելով նրա մանրութների գնահատման մեջ և չպաշտպանելով Զենալի ցանկությունները»<sup>18</sup> (ընդգծումը մերն է - Ե. Զ.):

Ահա այսպես, մեղավորը հայերն են, որոնք հոգացել են միայն Ռուսաստանի շահերի մասին և անտեսել նրա դաշնակիցներին՝ Ֆրանսիային և Անգլիային։ Մինչդեռ Զենալի հետ բանակցություններ սկսելու վերաբերյալ դեկտեմբերի 12 (25)-ին Փարիզ, Լոնդոն և Յորում ուղարկած հեռագրերում ոչ մի հիշատակություն չկա, որ այդ 7 կետերը հայերի առաջարկն են (բացի, երևի, 7-րդ կետից, որում խոսվում է հայերին պաշտպանելու մասին) և ոչ թե Ռուսաստանի։ Եվ Վերջապես, չէ՞ որ Ռուսաստանը կարող էր փոփոխություն կատարել հայերի ներկայացրած (եթե իսկապես դրա հեղինակը հայերն էին) ծրագրում։ Ինչո՞ւ Սազոնովը դա չէր արել՝ քաջ գիտենալով թուրքական տարածքների նկատմամբ Ֆրանսիայի և Անգլիայի պլանների մասին։ Այլ դրա փոխարեն ենթադրություն է անում, թե հնարավոր է օգտագործել Զենալի փառասիրությունը այլ պայմանների համար և ավելացնում, որ կարող են հավաստիացնել Բրիտանին, թե իր մտքում չկա իրենց դաշնակիցների իրավունքների որևէ ոտնահարում, ու առաջարկում է պարզել այն պայմանները, որոնք ընդունելի են Ֆրանսիայի համար։ Իսկ Իզվոլսկու պատասխան հեռագրում (19 դեկտեմբերի (1 հունվարի) 1916 թ.) ասված էր, որ Ֆրանսիայի համար ընդունելի կլինեն միմիայն այն պայմանները, որոնցում որոշակիորեն կխոսվի Սիրիայի, Կիլիկիայի և Պաղես-

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 145-146։

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 146։

տինի մի մասի նկատմամբ Ֆրանսիայի իրավունքների մասին: Չնայած նման պատասխանին՝ Բրիտանը, ելնելով Ձենալի հետ բանակցությունները եգիպտոսում վարելու նպատակահարմարության մասին Սազոնովի առաջարկությունից, հանաձայնում է, որ դրանք վարի Լոնդոնը և հանձնարարում է իր դեսպանին համապատասխան առաջարկություն անել բրիտանական կառավարությանը:

Այսպիսին էր Ֆրանսիայի դիրքորոշումը Ձենալի օգնությամբ Օսմանյան կայսրությունում երկապառակություն առաջ բերելու նախագծի նկատմամբ: Այն հանգում էր երկու կետի:

1. Սիրիայի, Կիլիկիայի, Պաղեստինի մի մասի նկատմամբ ապահովված լինեն Ֆրանսիայի իրավունքները,

2. Ձենալի հետ բանակցությունները վարի Լոնդոնը և ոչ թե Փարիզը:

Այժմ տեսնենք, թե ինչ դիրքորոշում ուներ Լոնդոնը:

Դեկտեմբերի 17(30)-ին Սազոնովին հասցեագրած հեռագրում Լոնդոնում Ուսւաստանի դեսպան Բենկենդորֆը հայտնում է արտգործմինիստր եղ. Գրեյի հետ այդ հարցի վերաբերյալ իր զրույցի բովանդակությունը, որից պարզ է դառնում, որ վերջինս դեմ չէ Թուրքիայում ներքին բարդություններ առաջ բերելու հնարավորությունն օգտագործելուն, եթե Ձենալը բավականաչափ միջոցներ ունի դրա համար: Այսպես կասկածի տակ դնելով Ձենալի հնարավորությունը՝ Գրեյը միաժամանակ առաջ է քաշում երկու պայման. առաջինը վերաբերում է Բասրային, որը գրավել էր Անգլիան և, ըստ Գրեյի, չի կարող վերադարձվել Թուրքիային, և երկրորդ՝ Անգլիան գաղտնի բանակցություններ է վարում արաբների հետ և վերջիններիս կողմից Թուրքիայի նկատմամբ թշնամական դիրք որդեգրելու դեպքում Անգլիան կատարի արաբական պետություն ստեղծելու վերաբերյալ իր խոստումը, որի կազմի մեջ կմտնեն բուն Արաբիան և Միջագետքը՝ բացի Սիրիայից, որի նկատմամբ հավակնություն ունի Ֆրանսիան: Իսկ վերջում ավելացնում է, թե «**Ձենալը ոչ մի դեպքում չի կարող ոչինչ անել՝ գտնվելով արաբների նկատմամբ ընդիմության մեջ, և պայքարի միակ միջոցը նրանց հետ պայմանավորվելն է: Խիստ կարևոր է, որ անգլո-արաբական համաձայնությունը մնա գաղտնի և ոչ մի ձևով շահանի Ձենալին»<sup>19</sup> (ընդգծումը մերն է - Ե. Զ.):**

Այս հեռագրի բովանդակությունը ցույց է տալիս, որ թեև Լոնդոնը ընդունում է Թուրքիայում ներքին խռովություն առաջ բերելու անհրաժեշտությունը, բայց ևս ինքը չի մասնակցի Ձենալի հետ տարվելիք բանակցություններին և իր հերթին կփորձի այն բարդել Փարիզի վրա: Եվ իսկապես, շուտով Պետրոգրադում ստացվեց Լոնդոնից Բենկենդորֆի ուղարկած հեռագիրը (28 դեկտ. 1915 թ. – 10 հունվ. 1916 թ.), որում ասված էր, որ Գրեյը իրեն հայտնել է, որ Անգլիան չի կարող միաժամանակ բանակցություններ վարել և արաբների, և հայերի հետ ու գերադասում է, որ հայերի հետ բանակցությունները վարի Ֆրանսիան: Գրեյը կանխատեսում էր բարդություններ հայերի և արաբների հետ բանակցություններում Սիրիայի և Փոքր Ասիայի հարցում, որտեղ գերակշռում էին ֆրանսիական շահերը: «Նա ասաց, որ եթե հայերը գերադասում են բանակցություններ

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 148:

վարել Եգիպտոսում, ապա Զավրիկը կարող էր հանդիպել Կահիրենում ֆրանսիական դեսպանորդի հետ»<sup>20</sup>, - կարդում ենք վերը նշված հեռագրում:

Երկու օր հետո Սազոնովը հայտնում է Իզվոլսկուն, որ համաձայն է Գրեյի կարծիքին, որ Զեմալի հետ հայերի հարաբերությունը ավելի լավ է կենտրոնացնել ֆրանսիացիների ձեռքում և հանձնարարում այդ հարցը քննարկել Բրիանի հետ: «Միանում են Գրեյի կարծիքին, - ասված է Իզվոլսկուն ուղարկած Սազոնովի դեկտ. 30-ի (հունվարի 12-ի) հեռագրում, - որ հայերի միջոցով Զեմալի հետ տարվող բանակցություններն ամենից լավ է կենտրոնացնել ֆրանսիացիների ձեռքում: Բարեհաճեցեք այս իմաստով բացատրվել Բրիանի հետ՝ նշելով, որ նկատի ունենալով նրա ավելի վաղ արտահայտած կարծիքները՝ ես անհրաժեշտ եմ համարում Ֆրանսիային վերապահել դեկավար դերը բանակցություններում, որոնք կարող են շոշափել Սիրիայի ճակատագիրը»<sup>21</sup>: Այնուհետև նշելով, որ իրեն ցանկալի է տեսյակ լինել բանակցությունների ընթացքին, և որ իր ներկայացուցիչներին կհանձնարարի ամեն տեսակի աջակցություն ցույց տալ ֆրանսիական ընկերակիցներին, ընդունենք մեկ շաբաթ անց՝ 1916 թ. հունվարի 6-ին (19-ին), Փարիզի և Լոնդոնի իր դեսպաններին հեռագրում է, թե «միջնորդները ենթադրում են, որ բանակցությունների սկսումը դանդաղեցնելը կարող է խանգարել հաջողությանը: Եթե կառավարությունները, որոնց մոտ Դուք հավատարմագրված եք, սկզբունքորեն համակրում են Թուրքիայում ներքին բարդություններ առաջացնելու մտքին, միջնորդները կարող էին անհապաղ մեկնել Եգիպտոս և ճանապարհին ընդունվել Փարիզի և Լոնդոնի արտաքին գործերի մինիստրություններում»<sup>22</sup>: Սակայն 4 օր անց՝ հունվարի 10-ին (23-ին), Սազոնովը ստանում է Բենկենդորֆի հեռագիրը, որում, վկայակոչելով Նիկոլսոնին<sup>23</sup>, տեղեկացնում է, որ բրիտանական կառավարությունը հարցի նոր քննարկումից հետո որոշել է մի կողմ քաշվել Զեմալի միջնորդի հետ հարաբերվելուց: Նիկոլսոնը որևէ դեսպանին ոչինչ չէր հայտնել Զեմալի հետ բանակցելուց բրիտանական կառավարության հրաժարման իրական պատճառների մասին, այն մասին, որ իր կառավարությունը ՈՒՍՍԱՍՏԱՆԻՆ՝ Բենկենդորֆին ասել էր, որ Լոնդոնը ոչ մի արգելք չի տեսնում Զեմալի միջնորդի հետ ՈՒՍՍԱՍՏԱՆԻ և Ֆրանսիայի բանակցելու խնդրում: Եվ միայն հունվարի վերջին ու այն էլ ոչ թե անզլիական, այլ ֆրանսիական կառավարությունից Սազոնովը տեղեկանում է այդ «խիստ գաղտնի» բանակցությունների մասին: Յունվարի 27-ին (փետրվարի 9) Իզվոլսկին, վկայակոչելով ֆրանսիական կառավարությունից ստացած տեղեկությունը, հայտնում է Սազոնովին, որ վերջին ժամանակներս Անգլիան և Ֆրանսիան

<sup>20</sup> «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», Ձո՞ն Կիրակոսյանի խմբագրությամբ, Եր., 1972, էջ 380:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 381:

<sup>22</sup> "Раздел Азиатской Турции", с. 151.

<sup>23</sup> Մեծ Բրիտանիայի արտգործմինիստրության պետքարտուղարի օգնական:

բանակցություններ են վարում արաբական անկախ պետություն ստեղծելու և Սիրիան ու Կիլիկիան ֆրանսիական ազդեցության գոտու մեջ մտցնելու հարցի շուրջ: Եվ վերջապես, փետրվարի 5-ին (18-ին) Իզվուլսկին հեռագրում է իր կառավարությանը, որ Բեյրութում ֆրանսիական գլխավոր հյուպատոս ժորժ Պիկոն, որին հանձնարարված էր Լոնդոնում բանակցություններ վարելը Խալիֆարի և արաբական պետության ստեղծման հարցի մասին, գործուղվում է Պետրոգրադ այդ նույն նպատակով: Իսկ փետրվարի 8-ին (21-ին) Բենկենդորֆը հեռագրում է Սագոնովին առ այն, որ անգլիացի փորձագետ Մարկ Սայքսը, որի հետ բանակցել է ժորժ Պիկոն, նմանապես գործուղվում է Պետրոգրադ<sup>24</sup>:

1916 թ. փետրվարի 25-ին (մարտի 9-ին) Սայքսը և Պիկոն 11 հոդված-ներից բաղկացած մի գրություն ներկայացրին Ռուսաստանի արտգործմինիստր Սագոնովին՝ կից քարտեզով, որտեղ նշված էին թուրքական կայսրության՝ արաբներով բնակեցված տարածքների (Արաբական թերակղզի, Սիրիա, Միջազգետք) և Կիլիկիայի նկատմամբ իրենց հավակնությունները, նաև ասված էր, որ արաբների հետ բանակցությունները կվարեն երկու (անգլիական և ֆրանսիական) կառավարությունները: Այսպես սկիզբ դրվեց Սայքս-Պիկոյի համաձայնագրով Օսմանյան կայսրության բաժանման գործընթացին, որին միացան Ռուսաստանը և Իտալիան: Իսկ դա նշանակում էր, որ տերությունները հրաժարվում են Զեմալի օգնությանը թուրքիայում ներքին ցնցումներ առաջ բերելու Զավրիկի ծրագրից: Մինչդեռ Զավրիկը նարտյան այդ նույն օրերին թողնում է Բուխարեստը և շտապ ժամանում Փարիզ՝ անձամբ համոզելու ֆրանսիական կառավարությանը, որ Զեմալի հետ բանակցություններ սկսելը անհրաժեշտություն է: «Մի որոշ ժամանակ առաջ այստեղ եկավ Զավրիկը, - ասված է Սագոնովին մարտի 9-ին (22-ին) Իզվուլսկու ուղարկած հեռագրում: - Յիմնվելով Զեր նախակին ցուցումների վրա՝ ես նրան աջակցեցի տեսակցել Բրիանի հետ, որին նա հայտնեց վստահելի մարդկանց միջոցով Զեմալի հետ բանակցությունների պլանը, որոնց նա առաջարկեց ուղարկել Եգիպտոս: Բրիանը Զավրիկին ուշադիր ընդունելություն ցույց տվեց, բայց խուսափողական պատասխան տվեց՝ վկայակոչելով Զեմալի դրության մասին տեղեկությունների անորոշությունը և նախատեսված դերի համար նրա պիտանիությունը»<sup>25</sup> (ընդգծումը մերն է - Ե. Զ.):

Հեռագրի այս մասից դժվար չէ գուշակել, որ Զավրիկը Եգիպտոս ուղարկելու նպատակով իր հետ Փարիզ էր բերել այն երկու թեկնածուներին, որոնց մասին ժամանակին Բուխարեստում ռուս դեսպանորդի միջոցով տեղեկացրել էր ռուսական կառավարությանը: Սակայն Բրիանը, ճիշտ է դիվանագիտական էթիկան պահպանելով, իրականում մերժել էր Զավրիկի առաջարկությունը, ինչի մասին նա բացահայտորեն ասել էր Իզվուլսկուն: «Բրիանը ինձնից չթաքցրեց, - ասված է հեռագրի շարունակության մեջ, - որ նա անպատակահարմար է համարում Զեմալի հետ ինչ-որ բանակցությունների մեջ մտնել, քանի որ այդպիսիք անհամատեղելի է

<sup>24</sup> Առաջին աշխարհամարտի սկզբին Պետերբուրգը վերանվանվել էր Պետրոգրադ:

<sup>25</sup> "Раздел Азиатской Турции", с. 167.

համարում Ասիական Թուրքիայի կազմակերպման ծրագրի հետ, որի մասին բանակցություններ են վարչում Պետրոգրադում: Բրիանի բացասական վճռի մասին ես հայտնեցի Զավրիկին, որը մոտ օրերս մեկնում է Պետրոգրադ»<sup>26</sup> (ընդգծումը մերն է - Ե. Զ.):

Հայտնե՞լ էր Իզվուլսկին Զավրիկին Պետրոգրադում Ասիական Թուրքիայի բաժանման շուրջ ծավալված բանակցությունների մասին: Պետք է ենթադրել, որ ոչ՝ նկատի առնելով դիվանագիտական գաղտնիքը չբացահայտելու վարկածը: Այդ է վկայում նաև այն, որ Պետրոգրադ ժամանած Զավրիկը մեծագույն հիասքափություն է ապրում, եթե նրան արտօրդմինիստրությունում հայտնում են, որ Ռուսաստանին այլևս չի հետաքրքրում «Ձեմալի նախագիծը»: Դա նշանակում էր, որ խաչ էր քաշվում Կիլիկիայից և վեց վիլայեթներից կազմված ինքնավար Հայաստան ստեղծելու ծրագրի վրա, որի համար նա այդքան ջանք էր թափել Ռուսաստանում և Եվրոպայում:

Այդպիսի վախճան է ունենում Զավրիկի դիվանագիտական գործունեությունը 1916 թ.: Նրան ուրիշ ոչինչ չէր մնում անելու, քան կոտրված սրտով վերադառնալ Թիֆլիս:

Զավրիկի դիվանագիտական գործունեության մասին մեր խոսքը ուզում ենք ավարտել Հայ հեղափոխական դաշնակցության դեկավար գործիչներից մեկի՝ Ռուբեն Դարբինյանի տված գնահատականով. «Եթե պատմական իրադարձութեանց անհմանալի ծանապարհներով նրան վիճակեց քաղաքական շատ խոշոր դեր կատարել մեր ազգային կյանքում, յամենայն դեպս դրա պատճառը Զարենանի քաղաքական կարողութիւնները չէին: Որովհետև իրոք նա զուրկ էր քաղաքագետի ամենաանհրաժեշտ յատկութիւններից:»

Ուեալիստ չէր, այլ գերազանցապես ռոմանտիկ էր ոգով: Աւելի դեկաւում էր վայրկեանի յարափոփոխ տրամադրութիւններով, քան սառը բանակունութեան հաշիներով, հաւասարակշիռ, շրջահայեաց ու հեռատես մտքի թելադրութիւններով:

Վառ երևակայութեան տեր՝ նա ապրում էր աւելի երազներով ու ցնորական կառուցվածքներով, քան ծանր իրականութեան ընձեռած դաժան տւեալներով ու տխուր հնարաւորութիւններով...

Դյուրահավատ էր ծայր աստիճան ու պարզամիտ մանուկի նման: Բայց և միևնույն ժամանակ կուրորեն յամառ էր իր առաջադրած նպատակների հետապնդման մեջ, եթե նույնիսկ դժնիակ իրականութիւնը կամ գահավիժող դեպքերի դառն փորձը բացայացորեն աղաղակում էր այդ ցանկութիւնների իրականացման հնարաւորութեան դեմ կամ նպատակների վնասակարութեան դեմ»<sup>27</sup> (ընդգծումը մերն է - Ե. Զ.):

Ընդգծված տողերը իրավամբ դիպուկ են բնութագրում Զավրիկի՝ նշված շրջանի գործունեությունը:

\* \* \*

Անխոնջ ու համառ բնավորության տեր Զավրիկը չէր կարող երկար ժամանակով հեռանալ հայ քաղաքական կյանքից: 1917-1918 թթ. մենք

<sup>26</sup> Նույն տեղում:

<sup>27</sup> «Հառաջ», 18 ապրիլի 1920 թ., № 79:

նրան նորից տեսնում ենք Ռուսաստանում իրար հաջորդող կառավարությունների հետ բանակցելիս: Նախ փետրվարյան հեղափոխությունից հետո Յայոց ազգային բյուրոյի որոշումով Զավրիկը շուտով նորից հայտնվում է Պետրոգրադում, բանակցություններ վարում ժամանակավոր կառավարության արտգործնինիստր Միլյուկովի հետ և խոստում ստանում Արևմտահայաստանի ինքնավարության մասին: Իսկ երբ կադետական կառավարությունը տապալվում է, և նախագահ է դառնում Կերենսկին, նույն խնդրով բանակցում է նաև նրա հետ: Սակայն բոլշևիկների հոկտեմբերյան հեղաշրջումը վերջ է դնում և Կերենսկու իշխանությանը: 1918 թ. մայիսին Զավրիկը Մոսկվայում բանակցություններ է վարում բոլշևիկյան կառավարության հետ, որոնք, սակայն, ընդհատվում են Բաքվի դեպքերից անմիջապես հետո (Շահումյանի գլխավորած Բաքվի կոմունայի տապալումը): Զավրիկին՝ որպես Երևելի դաշնակցականի նույնիսկ տնային կալանքի են ենթարկում: Մի որոշ ժամանակ անց նրան թույլ են տալիս աշխատել Մոսկվայի հիմանդրանոցներից մեկում, որտեղ և վարակվում է տիֆով ու մահկանացուն կնքում 1920 թ. ապրիլին:

Այդ ամենին մենք չենք անդրադառնում, որովհետև նրա 1917-1918 թթ. դիվանագիտական գործունեությունը մի առանձին ուսումնասիրության նյութ է:

**ЭДИК ЗОГРАБЯН – Один из эпизодов дипломатической деятельности Якова Завриева (ноябрь 1915 г. – март 1916 г.).** – Не добившись успеха в Париже и Лондоне – Я. Завриев настаивал, чтобы Киликию присоединили к шести вилайетам, из которых предполагалось образовать армянскую автономию в составе Турции, – он в ноябре 1915 г. выдвинул новый план, т. н. «проект Джемаля». Узнав от константинопольских армян о трениях, возникших между Джемалем-пашой и правительством, Завриев представил русскому посланнику в Бухаресте план – подтолкнуть Джемала к антиправительственному выступлению. При этом Завриев уверял, что армяне готовы послать в Египет двух доверенных лиц и восстановить связи с Джемалем, которые у них имелись до войны. Заинтересованный во всяком внутреннем осложнении в Турции, Петроград сразу же предложил своим послам в Париже и Лондоне обсудить этот вопрос с французским и английским министрами иностранных дел.

Переписка Сазонова, главы русского дипломатического ведомства, с послами в Париже и Лондоне продолжалась до марта 1916 года. В конце концов Франция отказалась от «проекта Джемаля», видя в нем угрозу потерять области, обеспеченные ей соглашением с Россией, т. е. Сирию и Киликию, а Англия, вторично обсудив этот план в правительстве, не захотела вести переговоры одновременно с армянами и арабами.

**EDIK ZOHRABYAN – An Episode from Hakob Zavriev's Diplomatic Activity (November 1915– March 1916).** – In the article it is shown that achieving no success in Paris and London in the matter of joining Cilicia to 6 vilayets of Turkish Armenia for the formation of autonomy for Turkish Armenians, Zavriev put forward a new plan, the so-called “project of Jemal” in November 1915 in order to achieve this goal. Having learnt about the friction from the Armenians of Constantinople, arisen between Jemal

and the government, Zavriev gives the Russian envoy in Bucharest the plan of prompting Jemal for an open action against the government in exchange for the consent of allied powers of Russia, (Russia, England and France) to possess Asian Turkey. Thus, Zavriev assures that Armenians are ready to send two authorized representatives to Egypt for the restoration of communication with Jemal that existed before the war. Russia, interested in any internal complication in Turkey, immediately cables the ambassadors in Paris and London with the proposal to discuss the question with the Ministers of Foreign Affairs of the mentioned countries and cable urgently.

Correspondence of the Minister of Foreign Affairs Sazonov with the ambassadors in Paris and London lasted up to the beginning of March 1916 when France at last refused the project of Jemal seeing a threat of losing the area provided by the agreement with Russia, i.e. Syria and Cilicia; and England, after the double discussion in the government, simply refused to carry on negotiations with Armenians and Arabs simultaneously.